Հավելված
Սպիտակ համայնքի ավագանու 2022
թվականի դեկտեմբերի 21-ի թիվ
որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Սպիտակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

II. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը

3. Աղբահանության վճար վճարողների հաշվառումն իրականացվում է համապատասխան համակարգչային ծրագրով:

4. Աղբահանության վճար վճարողների հաշվառումն իրականացնում է Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժինը (հետմակարգող) բաժնի համապատասխան մասնագետների և աշխատակազմի՝ բնակավայրերում համայնքային ծառայության առաջատար մասնագետների պաշտոններ զբաղեցնող անձանց միջոցով:

III. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

5. Աղբահանության վճարի հաշվարկումը իրականացնում է Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժինը: Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող աղբ վճարողների աղբահանության վճարի հաշվարկումն իրականացվում է Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից շինության մակերեսի վերաբերյալ տրամադրված տեղեկատվության հիման վրա:

6. Աղբահանության վճարի գանձումը իրականացվում է համապատասխան մասնագետների միջոցով:

7. Աղբահանության վճար վճարող ֆիզիկական անձինք աղբահանության վճարները ինքնուրույն բանկային համակարգի միջոցով փոխանցում են համայնքի բյուջեի համապատասխան հաշվին: Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը աղբահանության վճարները իրենց բանկային հաշիվներից փոխանցում են համայնքի բյուջեի համապատասխան հաշվին բանկային համակարգի միջոցով:

8. Վճարումների բացակայության կամ մասնակի կատարված վճարումների դեպքում աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժինը ծանուցումներ է ուղարկում աղբահանության վճար վճարողներին առկա պարտավորությունների վերաբերյալ:

9. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի համապատասխան մասնագետը կամ բնակավայրերի մասնագետները գանձված գումարները, աղբահանության վճար վճարողների կողմից ինքնուրույն կատարված մուտքերը տվյալների շտեմարանում գրանցելուց հետո, կազմում են տվյալ ամսվա ընթացքում վճարված աղբահանության վճարի մասին հաշվետվություն և մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը ներկայացնում Սպիտակ համայնքի ղեկավարին: